

Հաջիե Ջեղի

ՍԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԵՐԸ ԵՎ ՔՈՒՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ

Հայոց հին ու նոր գրականությունը անսպառ աղբյուր է նաև քուրդ ժողովրդի պատմական անցյալն ու ներկան, նրա կենցաղը, ազգագրությունը, ժողովրդական ավանդական բանահյուսությունը ուսումնասիրելու գործում: Հայ միջնադարյան պատմիչներն, ինչպես և հետագա դարերի բանահավաքներն ու ազգագրագետները, գրելով հայ ժողովրդի կուլտուրայի մասին, հաճախ իրենց աշխատություններում մեջ են բերել նաև արևելյան ժողովուրդների լեզվի, բանահյուսության, դրականության նմուշներ՝ հայկական այբուբենի տառադարձությամբ:

Երախտագիտությամբ պետք է խնդրեմ, որ նրանք քրդերեն լեզվի, բանահյուսության և այբուբենի գծով ևս շատ գործ են կատարել:

Այդպիսի հին նմուշի մենք հանդիպում ենք Մատենադարանի N 7117 մատյանում, որը, ըստ ակադեմիկոս Հր. Աճառյանի, պետք է գրված լինի՝ X—XI դարերում:

Ձեռագրում, բացի տարբեր ժողովուրդների այբուբենների հիշատակումից, զետեղված են նաև յոթ լեզվի աղոթքի նմուշներ. մարաց (քրդերեն), հունարեն, ասորերեն, վրացերեն, պարսկերեն, արաբերեն և թուրքերեն, բոլորն էլ հայատառ:

Քրդերեն աղոթքը հետևյալն է. «Պակըժ՝ խոդե: Պակըժ զա յմ. պակըժ՝ վե մարկ, կոյ հաթի՝ իսաչէ՝ ըշկը ոմա. ոհհմա՝ թ՝ է՝ մա »:

Թարգմանությունը հետևյալն է. «Սուրբ աստված: Սուրբ զորություն. սուրբ և արքայություն, որ խաչից է եկել, փառք մեզ, խաղաղություն մեզ»¹:

Կարևոր է արձանագրել, որ հայ հին գրականության մեջ սա առաջին հայատառ քրդերեն նմուշն է և իբրև քուրդ լեզվի ու գրականության ամենահին հատվածներից մեկը, չափազանց հետաքրքիր ու նշանակալից երևույթ է, կարևոր առանձին ուսումնասիրություն:

Գոհունակությամբ պետք է նշել, որ մեսրոպյան տառերով են գրի առնվել նաև քուրդ ժողովրդի բազմահարուստ և բազմերանգ բանահյուսության մի շարք հին ու նոր նմուշներ, որոնք փրկվելով անհետ կորստից, այսօր կարող են նյութ տալ քրդագետ բանագետներին, ազգագրագետներին և լեզվաբաններին:

¹ Հր. Աճառյան, Աղվանից գիրք, տե՛ս «Տեղեկագիր» ՍՍՌԻ ԳԱ Հայկական ֆիլիալի, N 3—4, Երևան, 1941, էջ 5:

² Հայկական ՍՍՌ Միներալների Սովետին առընթեր ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարան, ձեռագիր N 7117, էջ 144բ.:

Ահա նման նյութերի շարքն են դասվում գեոևս XVII դարում գրի առնված քրդական մի շարք առածներ, ասացվածքներ և քառյակներ «Քրդերեն բեյքեր և ոտանավորներ» քնդհանուր խորագրով, գրված 1711 թվականին³։

Նշված ստեղծագործություններում արտահայտված են քուրդ ժողովրդի իմաստությունն ու փիլիսոփայությունը, դարերի փորձն ու աշխարհայեցողությունը, ինչպես.

Նա մալե փրո,
Նա կարդանե սաուր,
Մալե փրո,
Զո՛ւ զիեայ գրի,
Կարդանե սաուր
Զո՛ւ գրաւ դըպի¹. (էջ 119 բ)։

Դըչըմ աշէ խարապ գրբի,
Դըչըմ կահնի զուայ դըպի,
Բե զօլվաթի ոհա գրպի². (նույն տեղում)։

Հուր բըֆըբըր,
Դուր բըֆըբըր,
Քուր բըֆըբըր,
Շուր բըֆըբըր³. (նույն տեղում)։

Ուշադրության արժանի է քրդերեն և հայերեն լեզուներով ստեղծված հետևյալ քառյակը.

Ջաւ—կտաւ էյ,
Ճլո—թաւ էյ,
Մըիշք—հաւ էյ,
Կաւ—կարաւ էյ. (էջ 120 ա)։

Այս հանդավորված ոտանավորը մեզ հիշեցնում է նույն XVII դարի քուրդ ականավոր բանաստեղծ Ահմեդ Խանու գրած քուրդ-արաբերեն բառարանը, որը

³ Նույն տեղում, ձեռագիր N 737, էջ 119—121 և 150—151։

ուշ՝ շատ հարստություն,
Ոչ՝ վղի հաստություն,
Մեծ հարստությունը
Շուտ է վատնվում,
Հաստ վիզն էլ
Շուտ է բարակում։

Զազաջ եմ գնում՝ ռանգվում է,
Ագրյուր եմ գնում՝ ցամաքում է,
Տնավիրությունն էսպես է լինում։

Շատ մտածիր,
Երկար մտածիր,
Խոր մտածիր,
Ուր մտածիր,


Հրատարակութիւն Հ. Ս. Հ. Լուսժողովի

ԼԱԶՈ



ԲԻԹԱԲԵ ԱՎԱԼ

ՍՄԲԱ ԶԱՌԻԵԴ ԿԻՐՄԱՆԶԱՆ ՎԵ ԵԶԴԻԱՆ




ԻՋՐԻԱՆԻՆ

Հագորչի ռեճիստրի արդական աշխատանքների արտոգոստները

նույնպես ուտանալորի ձեռով է գրվել: Արդյոք սա էլ քուրդ-հայերեն լատարան ստեղծելու մի մեծ գործի սկիզբը չէ:

Հայատառ քրդական բանահյուսությունը հետագա դարերում շմնաց միայն ձեռագիր վիճակում. նրա մի շարք նմուշներ արժանացան հրատարակության՝ հայերեն թարգմանությամբ: Դրա ապացույցն է 1904 թ. հրատարակված «Էմինյան ազգագրական ժողովածուի» 5-րդ հատորը, որտեղ ղեկավարված են բանահավաք Սարգիս Հայկունու կողմից գրի առնված հայկական և քրդական բանահյուսական բազմաթիվ նյութեր: Այդ կառուցվածքով էլ ժողովածուն ուղղակի կոչվում է «Հայ-քրդական վեպ»: Ժողովածուի խմբագրության կողմից Գր. Խալաթյանը գրում է. «Ներկա գիրքը, որ «Էմինյան ազգագրական ժողովածուի» 5-րդ հատորն է կազմում, իսկ Պ. Ս. Հայկունու հավաքածներից էրոտրդ մասը,—պարունակում է յուր մեջ քրդական վեպեր, որ շրջում են Վասպուրականի հայ ժողովրդի բեհանում՝ տեղային այլ և այլ լարբառներով. այս է պատճառը, որ ներկա հատորը մենք հայ-քրդական վեպ անվանեցինք» (էջ 6):



Մի հատված քրդական ժողովրդական բեյթերից ու ուտանալորներից (1711 թ.):
Սեփականություն՝ Հայկական ՍՍՌ Մատենադարանի, ձեռագիր № 737

Հայատառ քրդերեն գրի են առնվել քրդական հետևյալ նշանավոր վիպերգերը. «Համե Մուսե», «Էնյլի Մեջլում» և «Մուլա Մուսի Սալթան» երգը, տրված են նաև դրանց թարգմանությունները, իսկ մյուս վիպերգերը գրված են խառը ձևով՝ հայերեն և քրդերեն, ըստ որում արձակը՝ հայերեն, իսկ չափա-

ծոն՝ քրդերեն։ Այդպիսիներից են «Ղանտիլի Սիյափուշ և Հեօզրեկ», «Ջանբալի», «Հասամ աղա», «Միրզա աղեն, Թելի Աշան», «Սիյաբենտո և Խաճե Զեռին», «Մամ ու Զին», «Սզդի Դերվիշե Ավդի», «Համուտե Շանկե»։

Ուրախությամբ պետք է նշել նաև այն բացառիկ աշխատանքը, որ կատարել է Կոմիտասը քրդական ժողովրդական եղանակների ձայնագրման գործում։ Նշված «Էմինյան ազգագրական ժողովածուի» 5-րդ հատորում ղեկավարված են քրդական 13 վիպերգերի եղանակների Կոմիտասի ձայնագրությունները, ինչպես՝ «Քուլուկ ու Դառո», «Մամզին», «Սևահաջի», «Համե Մուսի» և այլն։ Սրանք մեզ համար արժեքավոր են ոչ միայն այն իմաստով, որ քրդական ժողովրդական երաժշտության առաջին ձայնագրումներն են, այլև այն պատճառով, որ դրանց բնագրերը գրի են առնվել հայկական այբուբենի առադարձությամբ և ապա լատինական տառերով։

Քրդական ժողովրդական բանահյուսության նմուշների հայատառ գրառումը շարունակվեց նաև հետագա տարիներում։ Հայ բանահավաքները՝ աշխատելով ազգագրագետ Նր. Կալայանի գլխավորությամբ կազմակերպած գիտ. արշավների ընթացքում, որոնք տեղի ունեցան 1915—1916 թվականներին, Արևմտահայաստանից դադրած բանաստեղծներից մեծ քանակությամբ բանահյուսական նոր նյութեր գրի առան, այդ թվում, նաև քրդերեն լեզվով։ Դրանցից են՝ «Մամ ու Զին», «Զըլկազի», «Սյամանդի կասեն Խաջա զարուն», «Ֆարխո կասեն Սթուն», «Սևա Հաջու կասեն», «Ախթամար անունը և հայ երիտասարդի պատմածը», «Տընտըլ Հնարե միր մալաքանի», «Լավե Հըկարու կասեն», «Բոզե Քամալի հաքյաթ»⁴ և այլն։

Քրդական ժողովրդական բանահյուսության նմուշները կարևոր են հայ և քուրդ ժողովուրդների բանահյուսական կապերը, նրանց կենցաղն ու սովորությունները հետազոտելու, ինչպես նաև հայերեն և քրդերեն լեզուների բառամանություններն ուսումնասիրելու տեսակետից։

Քրդերեն գրավոր լեզվի հատկապես բառապաշարի և բառարարությունների ուսումնասիրության գործում կարևոր նշանակություն ունի նաև քրդերեն այն հայատառ գրականությունը, որը վերաբերում է քրիստոնեական կրոնին՝ հրատարակված Արևմտահայաստանի՝ քրդախոս հայերի համար և քրդերի մեջ քրիստոնեությունը տարածելու նպատակով։

Հայատառ լույս են տեսել «Ավետարան» (ըստ չորից ավետարանաչացն սրբոց, Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասու և Յոհաննու), հետևյալ քրդերեն խորագրով. «Ինճիլ. խոտտե մէ Իսա էլ Մէսիհէ, նըվըսանտըն պը տեսթե Մատթեոս, Մարգոս Լուդաս և Հաննա, Լը Ըսթամպուլտա գայօլ, 1857» «Աստվածաշունչ հին և նոր կտակարանց»։ Փէյմանէ նո է խօիյէ մա Իսա էլ Մէսիհէ», Լը Ըստամպուլտա, լը պասմախանէ է Ա. Յ. Պօյաճեան, թափ պուա, 1872։

Թվարկելով մեզ հայտնի այդ կարգի գրքերի ցանկը, ավելորդ չէր լինի նկատել, որ դրանք քրդական գրականության պատմության մեջ առաջին ծավալուն թարգմանություններ են և թարգմանչական արվեստի տեսակետից միանգամայն արժանի են ուշադրության։

⁴ Տե՛ս Հայկական ՍՍԽ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորի արխիվը։

Մեր դրած հարցի կապակցությամբ հետաքրքիր է նաև Արևմտահայաստանի Քուրդիստանի և Բալուչի առաջնորդ՝ վարդապետ Մկրտիչ Տիգրանյանի հրատարակած հայատառ դասագրքերը քրդերեն և հայերեն լեզուներով՝ քրդախոս հայերի և քրդերի մեջ գրագիտություն տարածելու նպատակով: Այսպես, նրա հեղինակությամբ լույս են տեսել «Այրբենարան քյուրտերեն և հայերեն՝ Ալիֆբեճիիզ գուրմանճի ու արմէնի», ի պետս մանկանց Քիւրտիստանցւոց, Կոստանդնուպոլիս, 1860 թ. բաղկացած՝ քուրդ-հայերեն միավանկ և բազմավանկ բավական հարուստ բառացուցակից, թվահամարներից, հայոց պատմությունից՝ թե՛ քրդերեն և թե՛ հայերեն:

Նույն հեղինակը 6 տարի հետո հրատարակում է նաև ընթերցարանը նրանում հիմնականում զետեղելով հայոց համառոտ պատմությունը և կրոնա-բարոյախոսական խրատական բնույթ ունեցող նյութեր: Դասագիրքը կոչվում է «Լապտեր յուսատու—Չըրայէ ըոճնի» քրդերեն և հայերեն լեզուներով:

Ահավաստիկ մեզ հայտնի այն հայատառ փղեբն գրականության համառոտ պատկերը, որը գոյություն ունի նախասովետական շրջանում և որը, թե՛ իր հնությամբ և թե՛ իր բազմազանությամբ, անշուշտ իր արժանի տեղը պիտի ունենա քուրդ ժողովրդի գրականության պատմության բնագավառում:

* * *

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով տեղացի քրդերը հայ եղբայրական ժողովրդի հետ թեկնածուներին նոր, լուսավոր դարաշրջան: Քրդերը ոչ միայն ազատագրվեցին բնաջնջումից և ծայրահեղ չքավորությունից, այլև կուլտուրայի բնագավառում ունեցան այն ամենը, ինչ դարեր շարունակ երազել էին: Նրանք ունեցան կառավարության կողմից հաստատված իրենց ալբուրենը՝ կազմված հայկական ալբուրենի տառադարձության հիման վրա, որի հեղինակն էր քրդագետ հայագետ Լազոն՝ Հակոբ Ղազարյանը:

1921 թվականին Հայկական ՍՍՌ-ի Լուսժողովմատի հանձնարարությամբ և հրատարակությամբ, էջմիածնում Լազոն լույս ընծայեց իր քրդերեն ալբուրենարանը՝ «Շամս» («Արև») խորագրով, որը հանդիսացավ կուլտուրական խոշոր իրադարձություն Սովետական Միության տերիտորիայում ապրող քրդերի կյանքում:

Նշված ալբուրենարանի հրատարակման կապակցությամբ Լազոն գրել է. «Այն, ինչ վախճանական թվականներից զբաղեցրել է կուլտուրական աշխարհը—հորինել քուրդերեն ալբուրենարան—այսօր իրականանում է Հայաստանի Խորհրդային կառավարության միջոցով միայն: ՀՍԽՂ Լուսժողովմատը հանձնարարելով ինձ այդ գործը, կանգ չի առել ոչ մի դժվարության առաջ, միայն թե շուտափույթ իրականանա այն, ինչ տասնյակ տարիների ընթացքում բանակոծվելների նյութ է ծառայել և մնացել է լոկ խոսք» («Շամս», էջ 1):

Նկատենք, որ Լազոյի գրածը վերաբերում է պետության կողմից հաստատված ալբուրենին, քանի որ քրդերեն լեզվով եղած գրականությունը մեզ հայտնի է դեռևս մեր թվարկության VII դարից, նախ արամեական և ապա արաբական տառերով:

Քրդական դպրության մասին հիշատակություն կա նաև X դարի հեղինակ Մովսես Կաղանկատուացու հայտնի աշխատության մեջ⁵:

⁵ Տե՛ս նրա՝ «Պատմություն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, էջ 5:

Սովետական Հայաստանի կառավարության կողմից պաշտոնապես ընդունված և հրատարակված քրդական այս առաջին այբբենարանը՝ այդ տեսակետից անշուշտ նոր երևույթ հանդիսացավ քուրդ ժողովրդի մշակույթի աստիարակում և որպես այդպիսին նրա դերը, իբրև մեծ դործի սկիզբ, շատ է մեծ:

Հազոն սկզբում փորձում է փյունիկյան, հետո արաբական և լատինական գրերը հարմարեցնել քրդերեն լեզվի հնչյուններին, սակայն տեսնելով, որ դրանք ղեկավարություններ կարող են առաջացնել, նպատակահարմար է գտնում հայկական այբուբենը, որով հնարավոր էր արտահայտել քրդերեն լեզվի բոլոր հնչյունները. այդ կապակցությամբ նա գրում է. «...հայկական այբուբենի մեջ ավելորդ գտանք ա, օ, ց տառերը, որ դուրս ձգեցինք: Մեսրոպյան լ-ը ընդունել ենք իր նախնական հնչյունով՝ որպես ու. էա-ի փոխարեն գործ ենք ածել ա, իսկ ու է (ֆրանսերեն eu) փոխարեն ,. Այսպես և երկրարժաններում: Ահա նրա կողմից կազմված քրդական այբուբենը.

Աա, Բբ, Գգ, Դդ, Եե, Զզ, Ըը, Թթ, Ժժ, Իի, Լլ, Խխ, Կկ, Հհ, Ղղ, Ծծ, Մմ, Յյ, Նն, Շշ, Չչ, Պպ, Ջջ, Ռռ, Սս, Վվ, Տտ, Բբ, Փփ, Քք, Ոո, Ֆֆ, Աա, Իւ, Իււ, Յեյե և երկրարժաններ՝ Յա-յա, Յո-յո, Յե-յե, Եյ-եյ, Իյ-իյ:

Այդ տարիներին Աշտարակում քուրդ, որը երեխաների համար կազմակերպվել էր առանձին որբանոց, Ահա դրա շուրջը հավաքված և ապա քաղաքի ուրիշ հիմնարկների քուրդ և քրդերեն իմացող հայ աշխատողներից, նույն 1921 թվականի օգոստոսին, Հայկական ՍՍՌ Լուսավորության ժողկոմատի հանձնարարությամբ՝ Հազոն կազմակերպեց քրդական ուսուցչական առաջին դասընթացներ՝ երկու ամիս տևողությամբ:

Հազոն դարձավ այդ դասընթացների վարիչն ու միակ ուսուցիչը, ուր և առաջին անգամ «Շամսի» մեսրոպյան գրերով ավանդեց քրդերեն լեզուն:

Այնուհետև հիմնադրվեցին քրդական առաջին դպրոցները:

Սովետական Հայաստանի քրդական գյուղում երևաց քրդերենի ուսուցիչը, մուտք գործեց «Շամս» այբբենարանը, հավաքվեցին աշակերտներ՝ մեսրոպյան գրերով սովորելու իրենց մայրենի լեզուն.

Դա 1921—22 ուսումնական տարին էր:

Հազոյի դերը մեծ է նաև Վրացական ՍՍՌ մայրաքաղաք Թբիլիսիում քրդական դպրոցներ հիմնադրելու գործում: Նրա նախաձեռնությամբ գաղթական եզդի քրդերի որը երեխաների համար Վրացական ՍՍՌ Լուսավորումատը կազմակերպեց որբանոց, Այնուհետև, Վրացական ՍՍՌ Լուսավորության ժողկոմատը «Շամս» քրդական այբբենարանի հրատարակության կապակցությամբ և նրա հեղինակի նախաձեռնությամբ Թբիլիսիում բացեց առաջին քրդական գիշերօթիկ դպրոցը: Այստեղ ևս Հազոն հանդիսացավ այդ դպրոցի հիմնադիրն ու կազմակերպիչը, քրդերեն լեզվի ուսուցիչը:

Իբրև մանկավարժ և հասարակական գործիչ՝ Հազոն բացի դպրոցական աշխատանքներից, քաղաքի քուրդ բնակչության մեջ կուլտուր-կրթական աշխատանք էր վարում: Նա իր դպրոցի սաների միջոցով քաղաքի բանվորական ակումբներում լայն աշխատանք տարավ քուրդ բնակչության մեջ. ամենուրեք կազմակերպում էր երեկոներ, տալիս զեկուցումներ, բեմադրում իր կողմից:

ղրված քրդական առաջին պիեսները: Նա թե՛ քրդերեն և թե՛ հայերեն լեզուններով ստեղծագործել է պատմվածքներ քրդերի կյանքից, զբաղվել քրդերի պատմությամբ, հավաքել ժողովրդական բաղմամբով ստեղծագործություններ, զբաղվել թարգմանություններ⁷, և այդ բոլորը հայկական մեսրոպյան այբուբենով:

Հարազատ է մեզ անմահ Մեսրոպ Մաշտոցը, հարազատ են նրա ստեղծած 1600-ամյա հավերժական գրերը, որոնցով և նրան ուղղում ենք մեր խորին հրախտագիտական խոսքը:

7 Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի Հազոյի արխիվը: